

լի կ'ընտրեմ պատանեաց խոհեմութիւնը քան թէ ծերոց ալիքը։ Փաւստինաս քեզի բարև կ'ընէ . սույզ գիտցիր որ քեզի համար շատ կը բարեխօսէ ին ծի. ամեն օր գլուխս կը ցաւցընէ որ հետդ չսրդողիմ, ըսելով որ խոհեմ մարդիկ պատանեաց թեթևութիւններուն պէտք չէ նային, ու ծեր չկայ որ ամենայն մասմբ պատանի եղած չըլլայ։ Աս նիւթիս վրայ ուրիշ բան չեմ գրեր քեզի, աս միայն կ'ըսեմ. դուն աղէկ որ ըլլաս, ես չեմ կրնար ուրանալ քեռորդիս, իմ ձեռասունս ու աշկերտս ըլլադ։ Թէ որ տեսնեմ քու զգաստանալդ, հետդ կը հաշտուիմ. վասն զի իրար սիրողներուն սրտէն ուրիշ բան չկրնար բարկութիւնը դուրս ընել, բայց միայն իրենց յանցանկը ճանչնալն ու ուղղելը։ Աս բաները քեզի գրելուս պատճառը՝ Փաւստինային գլուխս ցաւցընելը եղաւ։ Դիք ամեն վտանգէ պահեն զքեզ. խնդրէ իրենցմէ որ քուվարդդ կարենաս ուղղել։ Մարկոս ինքնակալ չումայ իր ձեռքովը կը զրէ քեզի Աննիոսի Եպեսիպապուի։

ՃԱՆԱՊԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ
ԶՈՒՄՐ ՃԻՑԵՐՁԻ ՕՂԼՈՒ ՔԱՀԱԱՑԻ
(Տես երես 145)

Եղբայր, այսուհետեւ պատմենք սուրբ Յորդանանանց զգնալն և զգալն մի ըստ միոչէ։

Յորժամ կամենաս զնալ 'ի սուրբ Յորդանան, ծաղկազարդին օրն քիրածիքն և ֆէլլահներն դալ և զնալ են . ոմն դանիբրմնոյ ձգէ փեկի¹. և ոմն ախվայ. թէ այլ ուրիշ մարդու տավար չի բռնես տէյի. ապա առաւօտուն տեսանես, եղբայր, վասնից դռան առջնն մի կողմն Բէթլէհէմի ֆէլլահներն, միւս կողմն շամցի զաթրճիքն. նոքա կ'ըսեն

թէ մեք կու տանիմք. միւսն կ'ըսեն թէ մեք կու տանիմք. և ես դուրս ելայ՝ զուղտն նայիլ գնացի. նա տեսնեմ որ մէկ զմէկ ինկան՝ սօփայ սօփայի. ուղտերն մէկ մէկի խառնվեցան. քարն իրերն անձրև կու թափի. եկն միտս իմ, մոտայ ուղտին փորուն ներքև, հաղիւ ազատեցայ. և վանից դուռն ճորով գըտայ. նա տեսանեմ արապ թէլլան եկ, ելաւ բարձր տեղ և ձայնեց. ամենեքեան լուռ կացին թէ տեսանեմք ինչ կու կանչէ. այսպէս ասաց. թէ, Շամշէկը տանին ըխտաւորք զջուրն, ապա թէ զի օգտէ՝ ապա Բէթլէհէմցիք տանին։ Եւ ֆէլլահնին նկուն եղեն, և ես տեսա անդ ղաթրճի մի զօրեղ, և տաւարնին լաւ. իսկոյն ձեռացն բռնեցի և ասացի, քանի տաւար ունիս. նա ասաց թէ ութը տաւար. չորսն բռնեցի, քաշեցի ներս վանկն։

Եւ հեծաք ելաք ճանապարհ ղաթար ղաթար. հաղիւ հասաք 'ի մէկ մէյտան լեառ մի, և անդ սակաւ մի էկէնմիշ եղաք՝ մինչև յետի ըխտաւորն գայ, անտի չուվեցաք. ահա կու զնամք սարք տեղ. նեղ և լայն, դուր և փոս. եօխուշ մի վայր իջաք, մեծ եւազլյ՝ մի, չատրըներն տեսաք. և պայրախներն 'ի մեր առաջնէ. եթէ հարցանես, մինչև քսանըօթը պայրախ համարիցի. Սա եազն երկով է եղբայր. և ես լուեալ էի թէ վանից չատրըն քով իջի. հետս ունէի փոքր չատըր մի, իջայ անդ. շուտով տղաքն դուրսմիշ արին, քանզի օտան էի մոռացեր, անդ ֆէլլահնին դանութեն դուրմիշ արեր, մէկ օխլամուր սըրըին՝ վեց փարայ առաք. — այ ախմախ. քսան փարայ ուղէ, քանզի պիտոյ է. — և մոտաք 'ի մէջն, որ այն զանութնին մեր զիմացն էր. զինչ ուղես անդ գտանի. Զախ կողմն բարձր լեռներ, բայց մի լեռն կայ քան զամենայն բարձր է. և կայ զլուխն եկեղեցնայ տեղ. սա է փորձութեան լեառն, որ ասաց սատանայ, եթէ դու ես Քրիստոս՝ ասա զի քարինքս այս հաց լինիցին. և ասաց

1 Գրաւական։

1 Դաշտ մարգագետին։

Քրիստոս. ոչ փորձեացես զտէր Աստուած քո։ Եւ անդ է յուրին՝ որ սամփիսոն իշու չէնկէով (Հազար) հոգի ջարդեց. և անդ է Զաքէի տունն։ Օրտու պազար, ովկ կու քնանայ. հէլէ սակաւ մի ննջեցինք. զարթեաք, հազըր եղաք. նօպէթն զարկին մէկ հեղ. ձիեանն բեռցաք երկում եղանակին. հեծաք երրորդում եղանակին, պայրախնին առաջնէ, ահա կու գնամք սուրբ Յորդանան. լուսինն տամնըհինգ աւուր պէտիր, ինչ կանես զժէնէրն և զմաշալան. այս ճանապարհն լայն և հանգիստ է. յետնէ փաշին քեահեան՝ չիփոտէ մէշալէով. առաջնէ քսանըեօթը պայրախ սէյմէնով. հետևակն ուրիշ ձիւորն ուրիշ. քանզի կանուխ էր՝ երեք թէրծիմանն հետ, ապաներն՝ ի վերան։ Ոնդ կայ զումիուխ մի, զմեզ անդ արգելցին, մեք այլ վար իջաք զումին վերայ գնացաք։ Եղբայր, այսպէս տեղս աչքը բաց պիտի. վէ զաթրծին այլ դուռնաւազ, որ Սէյտի Սհմէտ կոչեւր, քան զամէնն յառաջ կու գնայր, անկարծ զաքը խասիս ասելն՝ ի բաց կու ցաթկես ձիուն վերայ որ մումին կու բաժանի. այնպէս կու քշենք՝ որ մէն զիլն ինչ պիտի լինայ. լուսացաւ, առաջնէ գնացող պայրախներն ճկեցան, ձախ կողմն բարձր լեառն ելան, և պայրախնին տնկեցին սրայով. մէհաէրխանան կու ծեծեն։ գնացաք յուրին եղերն, իջաք ձիուն՝ ի վար. շուտով հանուեցաք. անդ էիր և տեսեալ էիր. իջաք՝ ի յուրին և անդ հինգ հոգի մկրտեցի. և ապա Գաբրիէլ անուն վարդապետ մի զիս մկրտեց. և յուր լցաք մաքարան։ շուտով հագուեցաք ելաք՝ ի ձի. այս չափ մարդս որ կայեաք մինչև հազար հոգիէն աւելի. կէս սահամին մկրտուեցանք. ամման՝ եարան գողն շատ, ահ շատ, լէվէնտնին շորս կողմէն չալախ թրով՝ տէյինտի թէղ եղիք, ասելով, հազիւ ճանապարհ ելաք։

Այս սուրբ Յորդանան շատ լայն չէ, կարի խոր է. և յրին վազելն պտոյտ

առնելով է. ներքնադոյն կու վազէ, քաղցրահամ, խմելով չես զովանապր։ ի յետ դառնախն՝ երկու տաւշան ել գէմերնիս, զարկին սպանեցին. երեք էր, մինն գայլ էր՝ փախեաւ. և յետ նորա փաշին քեահիեան անցաւ առաջ ըշտապով. չատըր զարկին ճանապարհին բերանն. նախ ֆոէնկն էանց, և ապա հոռոմն ապա թէ մեք. չորս դրուշ մէկ թիւլքն՝ տուր և անցիր։ Դարձեալ եկաք՝ ի տեղերնիս կրկին երիքով. շուտով չատըրն մոտաք. վանից չատըրներուն մատէ միայն մեր չատըրն. ամենեքեան մաթ մնացին՝ թէ այս տեղս այլ թէ տարկիքով ես։ Եղբայր, շող և տաք որ չեմ կրնար պատմէր. մինչև ի յետինք այնչափ յուր խմեցինք՝ որ ասելու չէ. բայց սաղ յուր, իսկի ինճիթմիշ չարաւ. այս այն յուրին է՝ որ Եղիսէ աւրհնեաց։ Ինչ և իցէ՝ երեկոյ եղեւ. շորս կողմէն կրակ տուխն հառըլ հառըլ կու վառի. և փոքր խօսք լսեցի թէ քեահիեան պիտի չուէ. զիրա քովն տասը քէսէ ըստկէն եւել եղև, նորանից կու վախէ. կամ թէ ֆէլլահն պիտի կոխէ. զասոնք լսեցի կամաց մի, ձան չի հանեցի. գնացի չատըրն աւերիցի. դուրծին մէջն դրի, միւս կողմն եօրդանն և գետ Յորդանան յուրն. և հագայ ճիզմէս և նստաք։ Ոմանք ասացին թէ շորրորդում սահաթին կ'ելնեմք. իշտէ այս գիշերն իսկի չի քնացաք մինչև սահաթն հինգն գնաց հեծաք. բայց առաջի գիշերվան պէս նօպէթ չի չալեցին, չորս կողմն կրակն բազմացաւ. քըշեցին այն եազնն. եկաք դար մի վեր. այնպէս կու քշենք՝ որ գիտես թէ փախ են ձգեր։ Իշտէ այս տեղս զմաթարան այն անիծեալ ֆէլլահն գողցաւ. հարամ լինա։ Հազիւ առաջ անցաք և ազատեցաք՝ ի յղտիցն, մինչև ի յարեւծագուն եկաք հասաք՝ ի Բեթանիեայ. և անտի սորայ գիւղին պատին քովով կու անցանես. ապա Համբարձումն կու երեկի, դէպի Փրկչի դուռն կանգներ են՝ ի մեր միաբանից.

ձայնեն, թէ այս կողմն եկեք. եայ եղբայր, քաղաքացիք բերդին վերայ ելած նստած, զմեղ թամազա կ'անեն: Եկաք Փրկչի դռան. մէկ մէկ փարան կու տաս մտնես քաղաքն, և գնաս 'ի սուրբ Յակոբ: Բայց զայս ևս ծանիք սիրելիք. որ ծաղկազարդեն երկու երեք օր յառաջ՝ զիւղօրէից Արապներ կու գան սուրբ Երուսաղէմ. նոքա այլ ուխտ կ'երժան հազրէթի Մուսա կ'ըսեն. անդ գնան ութը օր. 'ի մեր գնալն սուրբ Յորդանան՝ նոքա աջ կողմն կու ճկին ղէպի Սոգոմ կու գնան. որ յետ զառնալն մեր Յորդանանու հետ՝ պարապար կու գան. նոքա սուրբ աստուածածնայ դռնէն կու մտնեն. 'ի մեր զալն, եղբայր, զեռես նոքայ չէին եկեալ, զիրա մեք կանուխ շարժեցաք: Այն սուրբ Աստուածածնայ դռանն դրսի դիհն սուրբ Ստեփանոսի քարկոծման տեղացն վերև մեծ լեառ մի է. անդ նստեալ են քաղաքացւոց տաճկի կանայք. սուտ չի խօսիմք. զիրա հաճի եմք, մինչեւ երեք հազար կին. առաջին և յետոյսն այր մարդ, նոյնպէս համար չի զար. զմեղ և զնոքա թամաշա կ'ըսեն. հէմէն մահանա մի կ'ուզեն որ դուրս թափին. այր և կին ծեր և տղայ կերակրով և այլ ամենայն կերպիւ կերպիւ չէյերով, որ այլում տեղ զրեալ կայ. այս այսպէս: ի մեր գնալն սուրբ Յորդանան. տես թէ միւսելիմըն ի՞նչ է արեր. որչափ տուն կայ՝ կու կոխէ, կամ դաւթայ մարդարէին սարայէն քաննըութը հոգի կու հանէ, ընդ ամէնն վատսուն հոգի, որ զինքն պահեալ էր. ձեռք ինկածն հինգ զուռուշ և կէս առեր. անկի կօմրիւկէն ըռզակ որ փախցնէ ոմն ձեռք որ անկանի երկու կօմրիւկ կու առնեն. նոյնպէս սոցա չորս զուռուշ մէկ թիւլթին տեղն. ոմանց վեց զուռուշ առին, ոմանց հինգ և կէս զուռուշ: Եայ եղբայր, 'ի ճանապարհին զալն՝ ձիուն վերայ կու քըրտնիս. և այնչափ տաւարին ոտաց հոմանիքն երես 'ի վեր կու գայ՝ որ մօրուք և երեսի վերայ թօղն կու նստի. զու ևս ֆէլլահ կու գառնաս. շուտով օտառ

կու գաս լուացվիս և հանգստանաս: Եթէ կամիս մէկ քիչ քնացիր, զիրա քընհատ ես և խոնճած: Այգան առայս սուրբ Յորդանանու բաւէ:

Սա որ կայ կամիմք պատմել, պիշրքէն՝ և Դաշրայ մարգարէին պարառն մի ըստ միոչէ:

Յորժամ գնան ըխտաւորքն մօտենան հայր Աբրահամու զուռն, աջ կողմն բաց և խոր, զէթունի ծառք համարք զի գար. պիւրքէ մի մեծ այս կողմն է, և այս պիւրքէին զպատճառն ասեմ ըստ կիզբէն: Յորժամ գնաց կոստանդիանոս ունէր հետն զհայրապետն Սեղբեստրոս, և թագաւորն Տրդատ ունէր հետ ըգսուրբ Գրիգոր լուսաւորիչ. ապա վիճակ ձգեցին թէ որն շինէ սուրբ Յարութիւն, կամ որն շինէ զուրբ Ծնունդն. և ել վիճակ Տրդատու թէ սուրբ Յարութիւնն շինէ. և ապա զմտաւ ածեալ սուրբ Գրիգոր Լուսաւորիչն և ասաց, որդեակ իմ Տրդատ, պարտ է քեզ ամել կոստանդիանու թէ քո հրամանկըդ շինէ զուրբ Յարութիւնն, քանզի նամեծ է քան զքեզ. և նա յանձն առեալ գնաց առ կոստանդիանոս և ասաց. Հայր իմ, ինձ շելաւ վիճակն սուրբ Յարութեան. և նա ասաց նմա. քո հրամանկըդ շինեա: Եւ յորժամ լուաւ զայս խօսքն ասաց թէ ով ետուր զայս խրատն քեզ. և Տրդատ ասաց հայրն իմ սուրբն Գրիգոր Լուսաւորիչ. և ասաց թէ բարի: Սոքա ունէին վարպետք հիւսանք. մեծ խորհուրդ արաւ 'ի մտի իւրում, և շինեաց նախ և առաջ զայս մեծ պիւրքէն. քաղաքէն դուրս խոր, և արար ճանապարհ զետնի ներքեսէն մինչեւ քաղաքին մէջն. և անդ ևս շինեաց պիւրքէ մի այլ. զրսի պիւրքէէն ներսի պիւրքէն զայր ջուրն. և անտի շինեաց ճանապարհ սուրբ Յարութեան մէջն փոքր հաւուղ մի. որ վարդապետք և ըռընչպէք անտի առնէին զջուրն. բոլոր տարի մի ջուր ժողովեաց. և ամենայն

իրք պիտոյից հազր առաւ . ապա սկը-
ռաւ հիմն արկանել :

Եւ կամիմք մտանել դուռն քաղա-
քին . կու իջանես 'ի զրաստէն , և կայ
ձախ կողմն պաղչայ մի որ ժամանակաւ
բաղանիս է եղեր . և կին Ուրիեայի անդ
լուացվեր . և աջ կողմն սարայն դաւ-
թայ մարգարէին . և կայ անդ փէնճէրէ
մի . անտի տեսաւ զկին Ուրիեայի Բեր-
սարէ , և ցանկացաւ : Եւ աջ կողմն դաւ-
նաս , և է բերդին դուռն . ներս մտնելն
երկու կողմն փէրէ . և այս դուռն եր-
կաթ մամուր . այլ ներս կ'երթաս մեծ
դուռ մի այլ փայտէ վերան քեավկիր
քէմէրով . և աջ կողմն կայ մէրտիվէն
մի քսանըութը ոտք , կ'ելանես վեր դը-
նաս ճուկ ճանապարհներով . դուռ մի
փոքր փայտէ , անդ կայ չորս հինգ օ-
տայ . և մին օտային ճակատն փէնճէրէ
մի որ կու հայի ճանապարհին վերայ .
և աստնստէր մարգարէն դաւիթ , և ար-
մունկն փէնճէրէին մէջ տեղն կոթնէր ,
սաղմոս ասէր . և արմոնկին տեղն փոս-
ցեր ձեռաց մի ղատար¹ : Ուխտ արէ և
տուր երկու փարան եղի ըստակ : Ելա-
նես դուրս կայ անդ նեղ մերտիվէն մի
տասուերկու ոտք . կ'ելանես վեր փոքր
սիրուն չորս քօշէ օտայ մի , ունի երկու
տախտակ փէնճէրէ , որ անդ նստեալ
քնարիւ ղաղմոսն երգեր է . և այժ-
մուս նօպէթճիք զուռնա տաւուլն անդ
շալեն . և իջանելն մէրտիվէնն 'ի վայր՝
կայ անդ չորս թօփ . իջաք դէպ 'ի վար ,
շատ զնացաք մութ տեղով . և անդ մեծ
տեղ մի և մէջ տեղն հոր մի , և տեսաք
սախան ջուր քաշեց , և մեք խմեցաք
ցուրտ և անուշահամ . և մեղ պատմեց
շուրջ ածողն՝ թէ այս ջուրս հայր Ար-
րահամու կու դայ . եթէ այս քաղքիս
ջուրն հատնի՝ սա կու զովացընէ , այն-
շափ առատ է : Ելաք անտի զնացաք
բանտն , և բացեալ զգուռն ներս մը-
տաք մութ . և կայր անդ հինգ փէլլահ
ոտքերնին զատանայ , և վզերնին զէն-
ճիլ հաստ և փայլուն . երկու խաթ է
դուռն . ներսի խաթն՝ հաստ փայտ վե-

րան երկաթ զափլը , տասնըվեց աչք . և
երեք կողմէն հաստ զէնճիլ . և միւս
դուռն՝ զուտր երկաթ երեսունըվեց աչք
և երեք կողմէն հաստ զէնճիլ . և մինն
միւսի վրայ կու կղպէ : Եւ կայ սորայ
քով օտայ մի որ պահապանք անդ նըս-
տին և պառկին . և անտի ելաք 'ի պէ-
տէնն¹ . քսանը չորս ոտք մէրտիվէն .
աստ կու կենան տնվորնին . և անտի
այլ առաջ կայ նեղ մէրտիւէն մի տաս-
նըչորս ոտք որ այլ վեր կու ելանես , որ
չորս կողմն երուսաղէմի կու տեսանես .
և անտի իջաք 'ի վայր և ելաք 'ի դուրս .
կայ դռան զիմաց երեք պօյլու թօփ և
զարապա տեղ . և աստ կայ ջուլհակի
մեծամեծ օտաներ . անցիր առջեէ և
զնա ուղիղ . Ճախ կողմն թումայի ա-
ռաքելոյն վանքն որ Քրիստոս աստ ծա-
խեց զնա . և մեծ քէմէր մի՝ որ սեղա-
նատունն սորա վերան է . յառաջ եր-
թաս սուրբ Յակոբայ դռան վերան քէ.
մէր , և մէջ տեղն նօմնս թագաւորա-
կան , և դուռն երկաթ մամուր . օրթայ
տեղն փոքր դուռ մի անճախ էշ մի
առանց բեռ կու մտանէ . և ունի զոյ
ութը . և լիակատարն յայլում տեղ
զրեալ կայ : Եւ յորժամ շինեաց կու-
տանդիանոս զսուրբ Յարութիւնն . յես
նորա շինեաց զսուրբ Յակոբ և ետուր
սուրբ Լուսաւորչի փէշքէշ 'ի պատիւ-
այնը որ ասաց Տրդատայ , երթ զնա ա-
սա թագաւորին թէ դու շինեա զսուրբ
Յարութիւնն . նորա համար պատիւ ետ
սուրբ Յակոբ Լուսաւորչի . ամէն :

Կը շարունակուի :

1 Պարիսոյ :